

Իսկ միւսը՝ (Լեւոն) երկու տարեկան : Ուրեմն Լեւոն ծնած է 1342-ին ,
անտարակոյս Սսի մէջ :

Ջուան իր բարի եւ հեղահամբոյր բնասրութիւնով ամենուն սիրելի
դարձած էր, եւ երբ Լեւոն Դ մեռաւ՝ բոլոր ժողովուրդը միաձայնութեամբ
թագապահ կարգեց զինքը , որ այդ փափուկ պաշտօնը վարեց մինչեւ իր
երէց հղբօր՝ Գուրգոնի՝ Սիս ժամանակը : Բայց Ջուանի եւ Սուլտանի եր-
ջանկութիւնն երկար չտեսց . վասն զի Ջուան երկու տարի վերջը մեռ-
նելով եւ Գուրգոնի սպանութիւնը վրայ հասնելով՝ Սուլտան իր որբերուն
հետ Կոստիկոսի բերդն աքսորուեցաւ Կոստանդին Գ-ի ձեռք առած նախազ-
գուշութեան հետեւանքով :

Սուլտան Կոստիկոսի բերդին մէջ ինն ամիս լքուած տառապելէ ետքը՝
երբ համոզուեցաւ , որ — եթէ հաւատ ընծայենք հոս Գարդելի — Կոս-
տանդին զիրենք թունաւորել տալու հրաման ըրած է (1) , գիշեր ժամանակ
ձկնորսի նաւակով մը փախաւ ապաստանեցաւ Կիպրոս՝ հետը տանելով իր
երկու որբերը :

Եւ որովհետեւ փախստական որբերը Կիպրոսի թագաւորին (Հիւզ Գ)
հօրեղբոր թոռներն էին , թագաւորը տուն տեղ եւ ամսական թոշակ մը
յատկացուց անոնց . իսկ Հիւզի մեռնելէն ետքը նոյն հոգածութիւնն ունե-
ցաւ անոնց վրայ իր որդին ու յաջորդը Պետրոս Ա :

Տեսանք (եր. 24) թէ ինչպէ՛ս գուրգուրանքով վարուեցաւ Պետրոս Ա
նախ Պեմոնդի եւ ետքէն Լեւոնի հետ, եւ միանգամայն ի՛նչ ստոր միջոցի
զիմեց Լեւոնը զրկելու համար իր իրաւունքէն , որպէս զի գո՛հացում տայ
իր փառասիրական ձգտումներուն : Արդ՝ Պետրոս Ա-ի սպանումէն վերջը
Կիպրոսի թագաւորութիւնն անցած էր իր անչափահաս զաւկին՝ Պետրոս
Բ-ի (1369-1382), բայց կառավարութեան զեկն անոր հօրեղբոր Յովհաննէս
Լուսինեանի ձեռքն էր , որ Պետրոս Ա-ի ըրածին պէս՝ Լեւոնի վերաբերեալ
պատական թուղթը ծածուկ պահեց ամենքէն , վասն զի ասո՛ր ալ նոյն
առաջարկն ըրաւ Կոստանդին , ինչ որ ըրած էր Պետրոսի :

Յովհաննէս Լուսինեան ա՛յն աստիճան խիստ կը պահէր Լեւոնը , որ
մինչեւ անգամ թոյլ չտուաւ անոր՝ իր խօսեցեալին քովը Մորէա երթալու
եւ ամուսնանալու . ուստի Լեւոնի ամուսնութիւնն ալ չյաջողեցաւ : Այս

(1) Գարդել կրտս Գաեւ, քե Կոստանդին նկատելով որ բունաւորելու
ծրագիրը ջուրն ինկաւ , հրամայած ըլլայ « ջրահեղձոյց » ընել երեքն ալ :
(Տե՛ս Գարդ. եր. 54 :